պես պարզև և այն ընդլայնելու ,,բարեկամ,, հասկացությամբ, որը մինչև այժմ էլ կա հայերենում, բայց ստացել է խոսակցական-ընտանեվարի երանգ:

ՆԱՐԴ ՔՈՉԱՐ

## ՀԱՅԵՐԻ ՏԵՂԸ ԱՌԱՋԱՎՈՐ ԱՍԻԱՅԻ ԵՎ ԿՈՎԿԱՍԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՄԵՋ՝ ԸՍՏ ՄԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ

1. Ինչպես պարզվեց ծեռնա-մաշկային ռելիեֆի ուսումնասիրություններից, հայերը բնութագրվում են այն գծերի առավելագույն արտահայտվածությամբ, որոնք բնորոշ են հարավային եվրոպեոիդներին, առանց որևէ այլ ռասայական խառնուրդների: Այդ նշանների համալիրը բարձրագույն արտահայտչականության է հասնում կովկասիոն և առաջավորասիական լոկալ ռասաներում:

2. Հիշյալ տվյալներից ելնելով, ուշագրավ է թվում հայերի բաղդատումն Առաջավոր Ասիայի և Կովկասի մի շարք ժողովուրդների հետ մի հատուկ մեթոդով, որը կոչվում է ,,ընդհանրացված գենետիկական տարածությունների,, մեթոդ, որն այդ արեալի ժողովուրդների դիֆերենցիացիայի չափանիշն է:

3. Ինչպես պարզվեց հաշվարկումներից, այդ մեթոդով թվարկած բոլոր ժողովուրդները բավականին մոտ են միմյանց: Հայերին առավել մերձ են օսերն ու հարավային վրացիների խմբերը և Հյուսիսային Կովկասի մի շարք ժողովուրդներ: Իսկ ամենահեռու ընկածները միթվալիներն ու սվանները են: Այդ մեթոդով ժողովուրդների մերձավորությունները համադրելու համար հաշվել ենք նաև գենետիկ տարածությունը հայերի և յակուտների միջև, որը գրեթե հասել է մեկ միավորի և ցույց է տալիս ծայրահեղ հեռավորություն:

4. Առաջավոր Ասիայի և Կովկասի ժողովուրդների ծեռնափերի մաշկաքանդակային ակնհայտ նմանությունը հավաստում է տվյալ բնատարածքների հին եվրոպեոիդ բնակչության ընդհանուր ծագումը: Նշանների այդ համալիրը կարող էր պահպանվել ռասայական մեկուսացման պայմաններում՝ սկսած նեոլիթի և բրոնզի դարերից, երբ նեղերես ու երկարագլուխ բնակչությունը քանակապես ծնշող մեծամասնություն էր կազմում:

ՌՈՒԲԵՆ ՕՀԱՆՋԱՆՅԱՆ

## ,,ԷԹՆԻԿ ՆԱԽԱՊԱՇԱՐՄՈՒՆՔ,, ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՐԵՎՄՈՒՏՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Արևմուտքի սոցիալական գիտությունների բառապաշարում լայնորեն օգտագործվող ,,էթնիկ նախապաշարմունք,, տերմինը դասվում է էթնիկ հարա-

բերությունների ցուցիչների թվին: Ներկայում կան նախապաշարմունքների մի քանի բնորոշումներ:

1. Բնորոշումների մի մեծ խումբ հիմք է ընդունում դիրքորոշումների տեսությունը: Այս կարգի բնորոշումների հիմքում ընկած են ընդհանուր և սոցիալ-հոգեբանական տարբեր դպրոցներում ընդունված բնորոշումները, որոնք հաճախ իրարից խիստ տարբերվում են: Այստեղ լայն տարածում է գտել այն տեսակետը, ըստ որի ,,նախապաշարմունքը որոշակի խմբի պատկանող անձանց նկատմամբ բացասական դիրքորոշում է,, /Ջ. Էրլիխ, Ջ.Լեվին, Մ.Շերիֆ/:

2. Նախապաշարմունքների բնորոշումների մի այլ խմբում հիմք է ընդունվում համատիպերի /ստերեոտիպերի/ տեսությունը: Ճիշտ է, այս խմբի ներկայացուցիչների հիմնական մասը նախապաշարմունքը բնորոշում է որպես բացասական կարծիք որոշակի խմբի պատկանող անձանց մասին ,,և ոչ որպես էթնիկ ընդհանրության սխեմայացված պատկեր,, / որը համատիպի առավել տարածված բնորոշումն է/, սակայն այդ հեղինակները կոնկրետ հետազոտությունները կատարում են այս կամ այն էթնիկ խմբի անդամների հոգեկան բնորոշ գծերին վերաբերող հարցվողի կարծիքը վերլուծելու միջոցով, որը ոչ այլ ինչ է, եթե ոչ էթնիկ համատիպ /Ա. Կատց, Ու. Բրեյլի, Ե. Պելմոր/:

3. Համեմատաբար ուշ շրջանի հետազոտություններում /1970-ական թթ. կեսերից սկսած/ էթնիկ նախապաշարմունքը բնորոշվում է որպես ,,որոշակի խմբի անդամների նկատմամբ բացասական կարծիքների, զգացմունքների և կողմնորոշումների համակարգ,, /Ջ. Ու. Վան դեն Լանդեն/: Այստեղ առկա է մեթոդական շփոթություն: Եթե կողմնորոշումը և զգացմունքը իրոք կարևոր հոգեկան երևույթներ են, ապա կարծիքը տարբեր սոցիալ-հոգեբանական երևույթների քառայրն արտահայտման մեջ է, որի միջոցով բացահայտվում են այդ երևույթները:

4. Այդ բնորոշումների ընդհանուր գիծն այն է, որ նախապաշարմունքը միշտ բացասական է: Ստացվում է, որ որևէ կոնկրետ հոգեկան երևույթ, կախված իր էմոցիոնալ ուղղվածությունից, տարբեր անվանումներով է հանդես գալիս:

5. Էթնոսոցիոլոգիական և էթնոհոգեբանական գրականության մեջ ,,նախապաշարմունք,, բառի օգտագործումը տերմինաբանական շփոթությունների է հանգեցնում, քանի որ, ինչպես երևում է դրա բնորոշումների համառոտ շարադրանքից, այդ տերմինով նշվում են տարբեր հոգեկան երևույթների միայն բացասական տարրերը:

6. Այսպիսով, կարելի է ասել, որ էթնիկ նախապաշարմունքն ամ-

բողջական հոգեկան երևույթ չէ և նպատակահարմար չէ այն դասել ազգամիջյան հարաբերությունների ցուցիչների շարքը:

---

## ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԻ - Լրտեսագիտության ինստիտուտ /ՀՍՍՀ ԳԱ/
ԵՊՀ - Երևանի պետ. համալսարան
ՀԱԹ - Հայաստանի ազգագրության պետ. թանգարան
ՀԱԻ - Հնագիտության և ազգագրության ինստիտուտ /ՀՍՍՀ ԳԱ/
ՀՊԹ - Հայաստանի պատմության պետ. թանգարան
ՀՍՀ - Հայկական սովետական հանրագիտարան
ՊԻ - Պատմության ինստիտուտ /ՀՍՍՀ ԳԱ/
ՌՕԼԻ - Վ. Բրյուսովի անվ. ռուս և օտար լեզուների պետ. մանկավարժական ինստիտուտ

## СОКРАЩЕНИЯ

АСЭ - Армянская советская энциклопедия
ЕГУ - Ереванский государственный университет
ИАЭ - Институт археологии и этнографии /АН Армянской ССР/
ИВ - Институт востоковедения /АН Армянской ССР/
ИИ - Институт истории /АН Армянской ССР/
ИРИЯ - Институт русского и иностранных языков /им. В.Я.Брюсова/
МИА - /Государственный/музей истории Армении
МЭА - /Государственный/ музей этнографии Армении